նակից էր, հաւանօրէն, և Զագավանից ժողովին, թէև յատուկ յիշատակութիւն չունինք այդ մասին, որի հովանաւորներից մէկն էլ Պռոշ մեծ իշխանն էր, Այրի վանքի պատրոնը։

Պատկեր 157.

Գրչութեան արուեստի մէջ մեզ հասած արդիւնքների մասին յիշատակեցինք արդէն եւ կը տեսնենք այսուհետեւ եւս, բայց միաբաններից երկուսը առանձին եւ պատուաւոր տեղ ունին մեր մատենագրութեան եւ մտաւոր կեանքի պատմութեան մէջ՝ Յովհաննէս Գառնեցին եւ Մխիթար Այրիվանեցին։ Գանձակեցու հաղորդած մի քանի տեղեկութիւնները Գառնեցու մասին առասպելախառն են, բայց այդ հանգամանքն արգելք չէ տեսնելու, թէ նա իրօք մեծ հեղինակութիւն եւ սուրբ մարդու հռչակ էր վայելում ժամանակակիցների աչքում, որպէս լուրջ եւ խիստ հայեացքների տէր վանական, որ առաւելապէս պարզուում է վանականներին նուիրած գրական վաստակների մէջ։ Այդ պատմութիւնների աղբիւրը՝ Վարդան վարդապետ՝ սիրով կապուած էր Նորա հետ. ամենամեծ յարգանքով է խօսում Նորա մասին եւ ինքը՝ Գանձակեցին, «առաքինի, զարմանալի վարուք, գործող պատուիրանացն Աստուծոյ» անուանելով. նա «ի սուրբ ուխտէն Այրիվանաց» էր, «ի մանկական տիոցն արհամարհեալ զամենայն ինչ կենցաղոյս, լքեալ զաղգ եւ զտուն, յանապատ տեղիս բնակէր, սիրէր առանձին լինել եւ անզբաղապէս խօսել ընդ Աստուծոյ, տուեալ զինքն աղգի աղգի ճգնութեան, պահոց եւ աղօթից, զետնատարած անկողնօք եւ անհանգիստ աշխատութեամբ, շրջելով ի տեղւոջէ ի տեղիս, եւ լուսաւորելով զպատահեալսն»։ Նա ճանապարհորդում է դէպի Երուսաղէմ, Սինա, Փ. Ասիայի այլ եւ այլ կողմերը, կեանքի վերջին մնացորդն անցկացնելով Հռոմկլայի հայրապետանոցում, ուր հրաւիրել էր նորան Կոստանդին Բարձրբերդցին (*)։ Այստեղ եւս մի տեսիլքով նա բացատրել է իւր հայեացքը կրօնափոխների նկատմամբ. մեղաւորների հետ տանջուելու են եւ նրանք, «որ կամեցան աղգէ յազգս փոխել եւ արհամարհեցին զմի մկրտութիւն եւ եղեն Հռոմ կամ Ֆռանգ կամ Ասորի (**)։

Գառնեցին իւր վաստակն ունի նաև գրական ասպարիզում. գրչութեան արուեստի մէջ Սաղմոսների նկատմամբ յայտնի է Գառնեցու օրինակը. ժամանակի



Պատկեր 158.

ընթացքում «յանհոգութենէ ոմանց եւ ի սղալապիր գրչաց» եղծուել էր Սաղմոսի հայերէն բնագիրը, մա-

(*) Գանձ. Ղուկ. հրատ. 334-342։

(**) N. Marr. Sbornik Pritcht Vardana, Prilojenik I. եր. 13։ Վարդանն էլ ունի Գառնեցու անուան հետ կապուած աւանդութիւններից մէկը. Արարատ, 1869, 55։